## ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐԸ

(Հրանտ Աբրահամյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը ծնվել է 1931 թ. օգոստոսի 12-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղում, գյուղացու ընտանիքում: Նրա հայրը նախկինում եղել է բատրակ, ապա՝ գյուղխորհրդի, հետո՝ կոլվարչության նախագահ: Հ. Աբրահամյանը, 1950 թ. ավարտելով Սոսի գյուղի միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել է Բաքվի Վ. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը և 1954 թ. գերազանցության դիպլոմով ավարտել: Ապա աշխատանքի է անցել Ադրբեջանի Ֆիզուլի քաղաքի Կիրովի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ: Նույն թվականին էլ զորակոչվել է ԽՍՀՄ զինված ուժեր և զորացրվել 1956 թ.: Այնուհետև աշխատանքի է անցել Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում: 1958-1970 թթ. հայրենի գյուղի ութամյա դպրոցի տնօրենն էր: 1973 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Լեռնային Ղարաբաղը 1920-1937 թվականներին» թեմայով:*

*Հ. Աբրահամյանը 1975 թվականից աշխատել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում, մասնակցել միութենական գիտական կոնֆերանսների, հետաքրքիր դասախոսություններով հանդես եկել հանրապետության տարբեր հիմնարկներում և բնակավայրերում: 1997 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Արցախահայության ազատագրական պայքարը 1917-1923 թթ.» թեմայով: 2004 թ. Հայաստանի բարձրագույն որակավորման հաստատության կողմից Հ. Աբրահամյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2006 թվականից նա արդեն ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատողներից է:*

*Հրանտ Աբրահամյանը մանկուց աչքի է ընկել աշխատասիրությամբ: Մեծ հայրենականի տարիներին, լինելով դպրոցական, ակտիվորեն մասնակցել է գյուղի կոլտնտեսության աշխատանքներին և իր ամբողջ վաստակը նվիրել Պաշտպանության ֆոնդին: 1947 թ. 16-ամյա պատանին պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին կատարած անձնվեր աշխատանքի համար» մեդալով: Հետագայում, շուրջ 10 տարի, լինելով դպրոցի տնօրեն, ոչինչ չի խնայել ուսուցման որակը բարձրացնելու և դպրոցը շրջանում առաջիններից մեկը դարձնելու համար:*

*Հ. Աբրահամյանը անհաշտ էր Ադրբեջանի իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի հայության նկատմամբ իրագործվող հակահայ քաղաքականության նկատմամբ: 1975 թ. «Սովետական մանկավարժ» հանդեսի 7-րդ համարում տպագրած «Երկրագիտական նյութերի օգտագործումը պատմության դասերին» հոդվածում մերկացնում է Արցախի*

դպրոցների նկատմամբ կիրառվող հակահայ քաղաքականությունը և հարց բարձրացնում Արցախի պատմությունը դիտելու որպես հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մաս և այն պարտադիր դասավանդելու Լեռնային Ղարաբաղի դպրոցներում: Ձերբակալությունից խուսափելու համար նա 1989 թ. ստիպված էր հեռանալ հայրենի Արցախից:

Արցախյան պատերազմի տարիներին Հ. Աբրահամյանը, լինելով «Արցախ» հայրենակցական միության ղեկավար կազմում, օր ու գիշեր աշխատում էր՝ նպաստելով Արցախի պաշտպանության ամրապնդմանը: Նրա գլխավորությամբ կազմակերպված «Վարանդա» հայրենակցական կազմակերպությունը սպասարկում էր Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանին, որտեղ պաշտպանական ուժերի հրամանատարն էր Մոնթե Մելքոնյանը: «Վարանդան» ձեռք էր բերում և Արցախի Մարտունի առաքում վառելիք, սննդամթերք ու պաշտպանության այլ միջոցներ: Թեկուզ մեկ օրինակ. 1992-ի մայիսի 9-ին Շուշիի ազատագրումից և Հայաստանի հետ ցամաքային ճանապարհը բացվելուց հետո «Վարանդան» Մարտունի է հասցնում 40 տոննա տարբեր ապրանքներ և սննդամթերք: Մոնթե Մելքոնյանը բազմիցս շնորհակալություն է հայտնել «Վարանդայի» նախագահին Մարտունու պաշտպանությանը ցույց տված օգնության համար: Հ. Աբրահամյանը «Արցախ» հայրենակցականի և նրա բաժանմունքների հերոսական գործունեության մասին պատմել է «Երբ հայրենիքը վտան- գի մեջ է» (1997 թ.) և «Մարտ կրակագծի մատույցներում» (2008 թ.) գրքերում:

Հրանտ Աբրահամյանը անաչառ և նվիրված գիտնական է: Նրա գրչին են պատկանում մամուլում հրապարակված 65, հանդեսներում՝ 72 գիտական հոդվածներ, 21 գիրք: Ներկայումս հրատարակության են սպասում «Հայաստանի տեղական խորհուրդները նէպ-ի տարիներին (1921- 1937 թթ.)» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. սոցիալ-տնտե- սական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանք 2000- 2008 թթ.» մենա- գրությունները, իսկ «Արցախը 18-19-րդ դարերում» և «Աշխարհի հայության բողոք- նամակները Արցախի հիմնահարցի վերաբերյալ» երկու հատորանոց փաստաթղթերի ժողովածուները շուտով պատրաստ կլինեն տպագրության:

Գիտնականի ուսումնասիրությունների հիմնական թեման Արցախն է՝ իր անցյալով և ներկայով: Գրելով հայրենի երկրամասի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ նա այն հրապարակել է «Կրթությունը և Գիտությունը Արցախում» հանդեսի մի շարք համարներում (2001-2005 թթ.):

«Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցա- խի թեմը (1901-1933)» մենագրության մեջ (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009 թ.) Հ. Աբրահամյանն արխիվային նորահայտ նյութերի հիման վրա ոչ միայն վերլուծում է Արցախ-Ղարաբաղի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքը, այլև մերկացնում է Արցախի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների իրագործած բռնարարքները:

«Մարտնչող Արցախը» եռամաս մենագրության մեջ քննարկվում են 1917-2000 թթ. Լեռնային Ղարաբաղի նորագույն պատմության բազմաթիվ հարցեր ու խնդիրներ: Հեղինակը խորաքնին ուսումնասիրել և հասարակայնությանն է ներկայացրել 1918-1923 թթ. տեղի ունեցած իրադարձությունների պատմությունը: 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղում տեղի է ունեցել արցախահայության 10 համագումար: Երկու տարի երկրամասը կառավարվել է այդ համագումարների կողմից, որոնք ունեին և՛ օրենսդիր, և՛ գործադիր գործառույթներ: Համաշխարհային պատմության մեջ դա լիովին նոր երևույթ է, որի մասին առաջինը գրել ու այն մեկնաբանել է Հ. Աբրահամյանը:

*Նա կարևորագույն հարցեր է բարձրացրել իր բազմաթիվ հոդվածներում ու աշխատություններում: Մերկացնելով Արցախի պատմության ալիևյան կեղծարարներին՝ վերստին ապացուցել է, որ հազարամյակների պատմություն ունեցող արցախցիների բնօրրանը հենց Արցախ-Ղարաբաղն է, և արցախցին երբեք էլ այստեղ «եկվոր» չի եղել: Թեկուզ և այն, որ այսօր երկրամասում կան 2000-ից ավելի հայկական պատմական հուշարձաններ, դրա լավագույն փաստարկումն է: Հ. Աբրահամյանը արխիվներից հանել և հասարակության սեփականությունն է դարձրել Արցախի պատմությանը վերաբերող հարյուրավոր նյութեր: Վերջերս ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Հ. Աբրահամյանի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1997 թ. օգոստոս – 1992 թ. հունվար)» փաստաթղթերի ժողովածուն՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման 20-ամյակին:*

*Նա գրել է նաև հայ ժողովրդի պատմության դասագիրք բուհերի համար (2004 թ.), որով առաջնորդվում են հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շատ ուսանողներ: Արժե նշել, որ Հ. Աբրահամյանը վերջերս է հրատարակել հայրենի Քերթ գյուղի գիտական պատմությունը, մի գիրք, որն ամբողջությամբ նորություն է: «Արցախի հերոսամարտը», «Թևան» (1998 թ.), «Ճակատագրին ընդառաջ» (2001 թ.) գրքերի համար Հ. Աբրահամյանն արժանացել է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա մրցանակին: Նա հրատարակության պատրաստվող՝ հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի հեղինակերից է: Խմբագրել է մի շարք գրքեր, եղել է բազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս, հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով ու գրախոսություններով:*

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա.**
Պատմական գիտությունների դոկտոր